

## ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹ

### ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սույն իրազեկման թերթի նպատակն է օժանդակել առևտրի իրականացման վայրի կազմակերպիչներին գործող օրենսդրության պահանջները կատարելու, ինչպես նաև տեղեկացնել առաջիկայում ակնկալվող օրենսդրական համապատասխան փոփոխությունների մասին:<sup>1</sup>

#### 1. Առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի տրամադրում

- ❖ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան առևտրի իրականացման վայրերում (բացառությամբ գյուղատնտեսական արտադրանքի շուկաների, կենդանիների շուկաների և վերնիսաժների) առուվաճառքն իրականացնում են բացառապես իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց և հարկային մարմնում հաշվառվելուց հետո):
- ❖ Արգելվում է առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ կողմից վաճառատեղերը վաճառողներին (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին) առանց համապատասխան պայմանագրերի վճարովի կամ անհատույց օգտագործման տրամադրելը, ինչպես նաև պետական գրանցում չստացած և հարկային մարմնում չհաշվառված ֆիզիկական անձանց տրամադրելը: Բացառություն է հանդիսանում միայն գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաներում ու վերնիսաժներում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց վաճառատեղերի տրամադրումը:
- ❖ Առանց համապատասխան պայմանագրերի կամ պայմանագրերով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց վաճառատեղեր տրամադրելն առաջացնում է վարչական պատասխանատվություն (յուրաքանչյուր վաճառատեղի համար 100-300 հազ. դրամի չափով):
- ❖ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ կազմակերպիչները առևտրական գործունեություն իրականացնողներին տարածքներ (վաճառատեղեր) տրամադրելիս օրենքով սահմանված կարգով պարտավոր են կնքել համապատասխան գրավոր պայմանագիր, որում պարտադիր պետք է նշվեն.
  - առևտրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, նրանց պետական գրանցման համարը և ամսաթիվը, ՀՎՀՀ-ն.
  - առևտրական գործունեության իրականացման ժամանակահատվածը.
  - վաճառատեղի հերթական համարը և հատկացվող տարածքի մակերեսը (մ<sup>2</sup>).
  - մեկ քառակուսի մետրի հաշվով գանձվող վճարի չափը.
  - պայմանագրի կնքման և գործողության ժամկետները
  - ՀՀ օրենսդրությունից բխող այլ պայմաններ:Պայմանագրերի վերաբերյալ տեղեկությունները ՀՀ կառավարության 01.04.2002թ. N298 որոշմամբ սահմանված կարգով պետք է ներկայացվեն հարկային մարմին:
- ❖ ՀՀ ԿԱ ՀՊԾ-ն օժանդակելու նպատակով կտրամադրի պայմանագրի տիպային ձև, որն ևս կսահմանի ներկայումս օրենքով պարտադիր պայմանների առկայությունը:

#### Ուշադրություն

1. *Օրենքից բխում է, որ պետք է բացառվեն օրենքի պահանջների խախտմամբ վաճառատեղերի տրամադրումը պետական գրանցում չստացած և հարկային մարմնում չհաշվառված անձանց.*
2. *Ակնկալվում է գործուն աջակցության ցուցաբերում առևտրի իրականացման վայրում ներկայումս առևտրական գործունեություն իրականացնողների պետական գրանցման և հարկային*

<sup>1</sup> օրենսդրական փոփոխություններն իրազեկման թերթում ներառված են ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 7-ի նիստում հավանության արժանացած դրույթները (տես ՀՀ ԿԱ ՀՊԾ կայքում. Taxservice.am)

*մարմնում հաշվառման գործընթացին՝ համագործակցելով պետական գրանցում իրականացնող և հարկային մարմինների հետ.*

*3. Պետք է ապահովված լինի վաճառատեղերի տրամադրման պայմանագրերի համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին.*

**2. Առևտրի իրականացման վայրի վաճառատեղերում հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրում**

- ❖ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ներկայումս վաճառողի պարտավորություն է հանդիսանում սպառողի (գնորդի) հետ դրամական հաշվարկները հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով իրականացնելու դեպքում վաճառված ապրանքի հետ սպառողին (գնորդին) դրամարկղային չեկի, իսկ առանց հսկիչ-դրամարկղային մեքենաների իրականացնելու դեպքում՝ ապրանքի գնի վճարումը հաստատող, վաճառողի կողմից հաստատված ձևի, փաստաթղթի (օրինակ, հաշիվ-ապրանքագրի) տրամադրումը:
- ❖ հարկ է նկատի ունենալ, որ 07.08.2008թ. ՀՀ կառավարության նիստում հավանության արժանացած փոփոխություններով նախատեսված է օրենսդրական փոփոխություններով առևտրի իրականացման վայրում ՀԴՄ-ների սահմանված կարգով տեղադրման ապահովումը պատվիրակել առևտրի իրականացման վայրի կազմակերպիչներին և հանդիսանալու է լիցենզավորման պարտադիր պայման:

**Անհրաժեշտ է**

*1. Առավելագույնս աջակցել առևտրի իրականացման վայրում առևտրային գործունեություն իրականացնողների կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրմանը՝ համագործակցելով հարկային մարմինների հետ, հաշվի առնելով նաև հետագայում առևտրի իրականացման վայրում շահագործվող ՀԴՄ-ները ներգրավելու են միասնական ցանցային համակարգում.*

*2. Հաշվի առնել, որ օրենսդրական փոփոխությունների փաթեթով նախատեսվում է, որ վաճառատեղերի տրամադրման պայմանագրերն ուժի մեջ են մտնելու սահմանված կարգով հարկային մարմնում գրանցված հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման քարտի առկայության դեպքում.*

**3. Առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործում միասնական տեղեկատվական համակարգում**

- ❖ Նախատեսվող օրենսդրական փոփոխություններով տեղեկատվական միասնական համակարգի ներդրումը և դրա հետագա անխափան ու անվտանգ շահագործման ապահովումը պատվիրակվելու է առևտրի իրականացման վայրի կազմակերպիչներին և հանդիսանալու է լիցենզավորման պարտադիր պայման:

**Անհրաժեշտ է**

*Իրականացնել ընթացիկ աշխատանքներ առևտրի իրականացման վայրում շահագործվող ՀԴՄ-ների միջև ցանցային կապուղիների ստեղծման, դրանք միասնական տեղեկատվական համակարգում ներգրավելու և շահագործելու հարցերի լուծման ուղղությամբ համագործակցելով հարկային մարմինների հետ:*

- ❖ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության կողմից ներկայումս իրականացվում են աշխատանքներ առևտրի իրականացման վայրերում ներդրման ենթակա ՀԴՄ-ների մոդելների ընտրության և դրանց միջև ցանցային կապուղիների ստեղծման հնարավոր լուծումների ուղղությամբ